

վրայ կը խօսինք, կարծես թէ ինքը բնաւ գոյութիւն չունի ինծի համար, այլ կեանքը, այլ երկիրը, այլ հայրենիքը, որ այնքան գեղեցկութիւններ ունի: Իր գործին մէջ եւ չտեսայ ածականներ, այլ պատկերներ էին ամբողջ աչքիս առջեւ, զորս այնքան բանաստեղծներ կը փնտռէին ու չէին գտներ, եւ զորս սակայն գտած է Զարդարեան, որովհետեւ զգացած է զանոնք, իրենց բովանդակ գեղեցկութեանը մէջ:

Ահա մարդ մը մեր առջեւ արժանի ամէն յարգանքի: Մարդ մը որ գաւառի շունչը տուաւ մեզի: Շնչենք այդ շունչը, մանաւանդ դուք երիտասարդներ, շնչեցէք զայն երիտասարդական շունչով մը, որովհետեւ ան գաւառէն կուգայ, մեր հայրենի բնակավայրէն, որուն արեւը քաղցր է, ջուրը անուշահամ, երկինքը վճիտ եւ օդը կենսատու ու պայծառ, եւ որուն վրայ կը սաւառնի գեղեցկութիւնը: Շնչենք այդ գեղեցկութիւնները: